ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 3 սեպտեմբերի 2012թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Վ. Հովհաննիսյանի
Անդամակցությամբ՝ Հ. Նազարյանի
Ա. Խաչատրյանի

Ուսումնասիրելով քաղաքացի Տիգրան Առաքելյանի անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

ՊԱՐԶԵՑ.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացի Տիգրան Առաքելյանը 2012թ. օգոստոսի 14-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 19-րդ հոդվածի պահանջներին հակասող եւ անվավեր ճանաչել՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 314.1 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, նույն հոդվածի 2-րդ մասի՝ «Քրեական դատավարությանը մասնակցող անձանց նկատմամբ նիստերի դահլիճից հեռացումը կարող է կիրառվել ոչ ավելի, քան 36 ժամով, իսկ դատական նիստին ներկա գտնվող այլ անձանց նկատմամբ՝ որոշակի ժամկետով կամ մինչեւ դատաքննության ավարտը» նորմը, նույն հոդվածի 6-րդ մասի 2-րդ եւ 3-րդ նախադասություններում պարունակվող նորմերը, 302 հոդվածի՝ «բացառությամբ սույն օրենսգրքի 314.1-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքի» նորմը, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 63 հոդվածի

1-ին մասի 2-րդ կետը, նույն հոդվածի 2-րդ մասի՝«Դատավարությանը մասնակցող անձանց նկատմամբ նիստերի դահլիճից հեռացումը կարող է կիրառվել ոչ ավելի, քան 36 ժամով, իսկ դատական նիստին ներկա գտնվող այլ անձանց նկատմամբ՝ որոշակի ժամկետով կամ մինչեւ դատաքննության ավարտը» նորմը, նույն հոդվածի 6-րդ մասի 2-րդ եւ 3-րդ նախադասություններում պարունակվող նորմերը, այնքանով, որքանով որ վկայակոչված բոլոր նորմերը վերաբերում են ամբաստանյալին՝ իր գործի քննության ժամանակ դատական նիստերից հեռացնելու միջոցով պատասխանատվության ենթարկելուն:

Դիմողը պնդում է, որ իր նկատմամբ վիճարկվող նորմերի հիման վրա կայացված որոշմամբ խախտվել է իր՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 19 հոդվածի 1-ին մասով, Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950թ.-ին Հռոմում ստորագրված կոնվենցիայի 6 հոդվածի 1-ին մասով եւ 3-րդ մասի գ/ եւ դ/ կետերով, Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 14 հոդվածի 1-ին մասի եւ 3-րդ մասի դ/ եւ ե/ կետերով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 23 հոդվածի 1-ին, 4-րդ, 5-րդ, 7-րդ եւ 8-րդ մասերով, ինչպես նաեւ ամբաստանյալին նույն օրենսգրքի նորմերով վերապահված՝ իր վերաբերյալ գործով դատական քննությանը մասնակցելու իրավունքները: Նրա կարծիքով, վիճարկվող նորմերն ուղղակիորեն հակասության մեջ են արդարադատության բոլոր պահանջների պահպանմամբ իր գործի քննության իրավունքի հետ:

Դիմողը գտնում է, որ վիճարկվող նորմերի կիրառմամբ ամբաստանյալին դատական նիստերի դահլիճից հեռացնելն ինքնին չի կարող համատեղելի լինել իր նպատակի՝ արդարության առանց խոչընդոտի իրականացման կամ արդարադատության հեղինակության պաշտպանության հետ:

Անհատական դիմումի նախնական ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ դիմողը պահպանել է ՀՀ սահմանադրական դատարան դիմելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի պահանջները, այն է՝

- դիմումում առաջադրված հարցերը ենթակա են սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում,
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- դիմողն սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ եւ 69-րդ հոդվածներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

ՈՐՈՇԵՑ.

1. Քաղաքացի Տիգրան Առաքելյանի անհատական դիմումով գործն ընդունել քննության:

2. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝

3 սեպտեմբերի 2012թ.
ՍԴԴԿՈ /1-19